

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ Բ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ  
ՆԱՄԱԿԸ

1

Երէջը՝ ընտրեալ տիկնոջ եւ անոր զաւակներուն, որ կը սիրեմ ճշմարտութեամբ, (ո՛չ միայն ես, այլ նաեւ բոլոր անոնք՝ որ գիտցած են ճշմարտութիւնը,) 2 այն ճշմարտութեան համար՝ որ կը բնակի մեր մէջ ու յաւիտեան պիտի ըլլայ մեզի հետ. 3 ձեզի հետ թող ըլլան շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն՝ Հայր Աստուծմէ ու Տէր Յիսուս Բրիստոսէ, Հօրը Որդիէն, ճշմարտութեամբ եւ սիրով:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԷՐ

4 Մեծապէս ուրախացայ, գտնելով թէ զաւակներէդ **ոմանք** կ'ընթանան ճշմարտութեամբ, այն պատուիրանին համաձայն՝ որ ստացանք Հօրմէն: 5 Հիմա կը թախանձեմ քեզի, տիկի՛ն, որ սիրենք զիրար. կը գրեմ քեզի ո՛չ թէ նոր պատուիրան մը, հապա ա՛ն՝ որ ունէինք սկիզբէն: 6 Սէրը սա՛ է.– ընթանալ անոր պատուիրաններուն համաձայն: **Եւ** պատուիրանը սա՛ է.– ընթանալ սկիզբէն ի վեր ձեր լսածին համաձայն: 7 Արդարեւ աշխարհ մտած են շատ մոլորեցուցիչներ, որոնք չեն դաւանիր թէ Յիսուս Բրիստոս մարմինով եկաւ: Այսպիսին մոլորեցուցիչ ու «նեռ է»: 8 Զգուշացէ՛ք դուք ձեզի համար, որ չկորսնցնենք մեր աշխատանքը, հապա ստանանք լման վարձատրութիւն: 9 Ո՛վ որ զանցառու կ'ըլլայ եւ չի մնար Բրիստոսի ուսուցումին մէջ, չունի Աստուած: **Իսկ** ա՛ն որ կը կենայ Բրիստոսի ուսուցումին մէջ, ունի թէ՛ Հայրը, թէ՛ ալ Որդին: 10 Եթէ մէկը գայ ձեզի ու չբերէ այս ուսուցումը, մի՛ ընդունիք զայն **ձեր** տունը, եւ մի՛ բարեւէք. 11 որովհետեւ ո՛վ որ բարեւէ զայն՝ կը հաղորդակցի անոր չար գործերուն:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍԸԵՐ

12 Ձեզի գրելիք շատ բան ունէի, **բայց** չուզեցի **գրել** թուղթով ու մելանով. քանի որ կը յուսամ գալ ձեզի եւ խօսիլ դէմ առ դէմ, որպէսզի մեր ուրախութիւնը լման ըլլայ: 13 Ընտրեալ քրոջդ զաւակները կը բարեւեն քեզ:՞

<sup>u</sup> Յուն.՝ հակաքրիստոս

<sup>p</sup> Ոմանք կ'աւելցնեն՝ Ամէն: